

Կարծիք

Լուսինե Գեղամի Մադաթյանի

«Ժամանակ հասկացույթի առկայացումը բրիտանական հեքիաթներում
(հայկական հեքիաթների զուգադրությամբ)»

ժ. 02. 07 «Ռոմանագերմանական լեզուներ»

մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի
հայցման ատենախոսության մասին

Լուսինե Գեղամի Մադաթյանի ատենախոսությունը նվիրված է բրիտանական և հայկական հեքիաթանյութի համատեքստում ժամանակ հասկացույթի արտահայտչամիջոցների ուսումնասիրությանը՝ ճանաչողական լեզվաբանության լույսի ներքո:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է ճանաչողական լեզվաբանության դիտանկյունից տեքստերի տարբեր տեսակների վերլուծության և մեկնության հանդեպ նկատելի հետաքրքրությամբ, որը հանգեցնում է *ժամանակ* արտահայտող լեզվամիջոցների առավել բազմաշերտ ու խորքային մեկնությանն ու բանահյուսական պատումի մակարդակում ժողովրդական աշխարհընկալման և ճանաչողության ուրույն կերպի բացահայտմանը:

Իր ուսումնասիրության մեջ ատենախոսը նպատակ է ունեցել ուսումնասիրել ժամանակի հայեցակարգավորման և արտապատկերման տարաբնույթ ձևերը ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից բրիտանական հեքիաթների համատեքստում՝ հայկականի զուգադրությամբ:

Այս նպատակն իրականացնելու համար ատենախոսն իր արջն դրել է որոշակի հետազոտական խնդիրներ, ինչպես օրինակ, ուսումնասիրել ճանաչողական լեզվաբանության մեջ լեզվի ու ճանաչողության փոխազդեցությունը, վերլուծել հեքիաթի տեքստում ժամանակի դրսևորման ձևերը, ստեղծել ժամանակի հայեցակարգավորման կադապարը, կատարել բրիտանական հեքիաթի սյուժեի զարգացման տարածական և ժամանակային ուղիների վերլուծություն, բացահայտել և տարանջատել կայուն բանաձևերում ժամանակի հայեցակարգավորման կառուցվածքային ու գործառութային

առանձնահատկությունները, ուսումնասիրել բրիտանական և հայկական հեքիաթներում կիրառվող հասկացական փոխաբերության և փոխանունության միջոցով ժամանակի հայեցակարգավորման առանձնահատկությունները, վերլուծել *Ժամանակ* հասկացույթի առանձնահատկությունները բրիտանական և հայկական հեքիաթներում:

Առաջադրված նպատակով և խնդիրներով պայմանավորված ատենախոսը կիրառել է ճանաչողական մեկնաբանության, ճանաչողական կադապարաստեղծման, համեմատության և գուգադրման, համատեքստային վերլուծության մեթոդները: Ատենախոսության համար որպես փաստական նյութ ընտրվել է բրիտանական և հայկական ժողովրդական հեքիաթների լեզվանյութը: Ձուգահեռաբար բերվում են նաև համարժեք օրինակներ հայկական հեքիաթներից անգլալեզու օրինակների ժամանակային արտահայտչամիջոցների առավել համոզիչ վերլուծության նպատակով:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, ծանոթագրությունից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Առաջին գլուխը, որ վերնագրված է «Ժամանակ հայեցակարգի տեսական հիմքերը», կազմված է չորս ենթագլխից: Այստեղն ներկայացվում են ճանաչողական լեզվաբանների Ջ. Լակոֆի, Մ. Ջոնսոնի, Ռ. Լանգաքերի, Ու. Չեյֆի, Վ. Էվանսի, Չ. Ֆիլմորի, Գ. Ֆոկոնիեի, Ն. Արությունովայի, Ե. Կուբրյակովայի, Յու. Ստեպանովի, Է. Աթայանի տեսական դրույթները և դրանց դերը լեզվի ուսումնասիրության մեջ, ինչպես նաև ժամանակի հայեցակերպի ընկալման գիտակարգային տարբեր մոտեցումներ: Ընդգծվում է նաև բրիտանական և հայկական հեքիաթներում *Ժամանակ* հասկացույթի քննության կարևորությունը:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «Ժամանակի առկայացման տարածական հայեցակերպը բրիտանական և հայկական ժողովրդական հեքիաթներում» բաղկացած է երեք ենթագլխից: Ատենախոսն ամփոփ անդրադառնում է տարածական եզրույթներով ժամանակի առկայացման մի քանի մոտեցումների: Հիմք ընդունելով Է. Ռոշի նախաստիպային դասակարգման սկզբունքը՝ ատենախոսն առաջարկում է տարածական կարգերով ժամանակի հայեցակարգավորման կադապարում (կետ, միջակայք, գիծ, շրջան, շրջագիծ և շրջանի հատված) և կատարում է ժամանակային կադապարներից

ածանցվող ենթակադապարների մանրամասն ձևաբանական, քերականական վերլուծություն: Յուրաքանչյուր կադապարի և ածանցվող ենթակադապարների վերլուծությունից հետո ձեռք բերված արդյունքները ներկայացվում են համապատասխան աղյուսակներով, որոնք ընդհանրացված ձևով ամփոփում են հետազոտության արդյունքները զուգադրության լույսի ներքո:

Երկրորդ ենթագլխում Ե. Մելետինսկիի, Վ. Պրոպի, Մ. Բախտինի, Դ. Լիխայովի կատարած ուսումնասիրությունների լույսի ներքո ատենախոսը գալիս է այն եզրակացության, որ տարածական տեղափոխությունները և՛ բրիտանական, և՛ հայկական հեքիաթներում գրեթե նույնն են բարի և չար հերոսների համար: Ատենախոսն ընդգծում է, որ երկու լեզուների հեքիաթներում տարբերությունն այն է, որ ոչ բոլոր տարածական անվանումներն են առկա երկու լեզուների հեքիաթանյութում: Վերլուծելով հրաշապատում հեքիաթում ժամանակային անցումներն՝ ատենախոսը հանգում է այն եզրակացության, որ հեքիաթը սկսվում է անորոշ ժամանակով, ունենում է որոշակի զարգացում, և ավարտվում է նույն անորոշ ժամանակով: Տարածական և ժամանակային անցումներն ավելի պատկերավոր են դարձնում ատենախոսի կողմից առաջարկվող գծապատկերները: Այս գլխի երրորդ ենթագլխում ատենախոսը խմբավորում է հեքիաթի կայուն բանաձևերը, ուսումնասիրում է վերջիններիս կառուցվածքային ու գործառության առանձնահատկությունները, ինչպես նաև ներկայացնում է հայկական հեքիաթներում հանդիպող զուգահեռ տարբերակները: Հարկ է նշել նաև, որ այս բանաձևերը դիտարկվում են ճանաչողական կադապարներ, որոնց հիմնական գործառույթը տեղի և ժամանակի անստույգ ու անորոշ ժամանակի զգացողություն ձևավորելն է:

Երրորդ գլուխում քննության նյութ է դարձել բրիտանական և հայկական հեքիաթներում ամենից հաճախ հանդիպող ժամանակի հայեցակարգավորման հասկացական գլխավոր դարձույթները՝ փոխաբերությունները և փոխանունությունները: Հետազոտության համար հիմք է ընդունվել Ջ. Լակոֆի, Մ. Ջոնսոնի մշակած այն տեսությունը, որ փոխաբերությունը ոչ թե ուղղակի խոսքը զարդարելու ոճական հնար է, այլ մտքի փոխաբերականացված արտացոլում: Հասկացական փոխաբերություններ

ենթաբաժնում վերլուծվում է ճանաչողական տեսաբանների կողմից առաջարկվող ժամանակի փոխաբերականացված կադապարները (ժամանակը շարժվող սուբյեկտ է, ժամանակը տարածություն է, ժամանակն առարկա է) գուգադրության համատեքստում: Հարկ է նշել, որ ատենախոսն առաջարկում է ժամանակի հայեցակարգավորման նոր դասակարգում՝ *տարածքն անուղղակի ժամանակ է, գործողությունն անուղղակի ժամանակ է, առարկան անուղղակի ժամանակ է*: Կատարված ուսումնասիրությունից ելնելով՝ ատենախոսը էջ 92-ում հանգում է այն եզրակացության, որ «տարբեր ժողովուրդներին պատկանող այս հեքիաթներում ժամանակի փոխաբերական կադապարներով հայեցակարգավորման ձևերը համարժեք են միմյանց, երբեմն էլ՝ նույնական»: Այնուհետև ատենախոսը ներկայացնում է ժամանակի հասկացական փոխանունության իր դասակարգումը՝ *ժամանակի արտապատկերումը ավանդական տոների, գյուղատնտեսական աշխատանքների, կենցաղավարության, բնության երևույթների, պատմական նշանակություն ունեցող անձանց անունների միջոցով (իրական, անիրական)*: Կատարվում է համապատասխան օրինակների մանրամասն վերլուծություն և վեր է հանվում երկու լեզուների հեքիաթներում այդ կադապարների գուգամետ և տարամետ հատկանիշները:

Հաջորդ ենթագլխում մանրամասնորեն վերլուծված է ժամանակի «ակնթարթային և դանդաղեցված ընթացքը»: Ակնթարթայնությունը դիտարկվում է որպես ժամանակի խնայողություն, իսկ ժամանակի դանդաղ հոսքը՝ առեղծված: Մրանցից յուրաքանչյուրն ունի համապատասխան պատկեր-սխեմաներ: Ատենախոսը վերլուծելով համապատասխան օրինակները ընդգծում է, որ նշյալ առաջին կադապարի հիմնական գործառույթը երկար նկարագրությունից խուսափելն է և եզրակացնում է, որ ժամանակը ժողովրդական հեքիաթում ոչ միշտ է շեշտվում, քանի որ այստեղ կարևորվում է վերջնարդյունքը: Օրինակների քննությունից ելնելով՝ ատենախոսը 111 էջում նշում է, որ ժամանակի դանդաղ հոսքի ճանաչողական կադապարի հիմնական գործառույթն է արտահայտել մարդկության ժամանակի առեղծվածային ընկալումները: Ժամանակի սուբյեկտային ընկալման դրսևորումները ատենախոսը դիտարկում է ժամանակի

տարբերակալման փոխաբերական կադապարով, որի գործառույթն է արտահայտել երբեմնի անբացատրելի թվացող ժամանակային մեկնաբանությունները:

Հարկ է նշել, որ բերված օրինակների հիման վրա ատենախոսը ցույց է տալիս, որ ժամանակի հայեցակերպը կախված է ժամանակին առնչվող մի շարք ունակությունների յուրացման հետ՝ մասնավորապես ժամանակը հասկանալու և դրա մասին խոսելու, անցյալը, ներկան և ապագան տարբերակելու, իրադարձությունների հերթագայությունը պատճառաբանելու ունակության հետ: Այդ իսկ պատճառով աշխատանքը միանգամայն իրավունք ունի համարվելու միջգիտակարգային, քանի որ ատենախոսն ազատ տեղափոխվում է այլ գիտակարգերի տարածք՝ հոգեբանությունից, սոցիոլոգիայից մինչև ֆիզիկա, և քննում է առանձնացված հրաշապատում օրինակներն այլ հարթություններում: Ասվածի ցայտուն օրինակ կարելի է գտնել 107 էջում, երբ ատենախոսը հեքիաթում ժամանակ հայեցակերպի դանդաղ ընթացքը քննելիս որպես գիտական հիմք օգտագործում է ՆԱՄԱ-յի իրականացրած փորձարկումները:

Ներկայացված ատենախոսությունը կարող է համարվել արժեքավոր ներդրում ինչպես բուն ճանաչողական լեզվաբանության և հեքիաթագիտության, այնպես էլ ընդհանուր լեզվաբանության և բանագիտության մեջ:

Աշխատանքում ներկայացված է պատկառելի ծավալի վերլուծական նյութ: Հանգամանալից և համակողմանի քննության են ենթարկվել մեծ թվով համարժեք օրինակներ՝ բրիտանական և հայկական բանահյուսական աղբյուրներից քաղված նմուշներ և վերլուծական-համադրական մեթոդների կիրառմամբ ենթարկվել խորքային վերլուծության:

Գրախոսվող ատենախոսությունը պատկանում է այն գիտական ուսումնասիրությունների թվին, որոնք կարող են ունենալ ակնհայտ շարունակություն, քանի որ կրում են հեռանկարային բնույթ: Այստեղից էլ բխում են որոշ հարցադրումներ և առաջարկներ:

1. Թեպետ, ատենախոսը տարբեր օրինակների վերլուծության մեջ անդրադարձ է կատարում բայի ժամանակաձևի մեկնաբանությանը, այնուամենայնիվ

կցանկանայինք ստանալ որոշ պարգաբանումներ հեքիաթներում գերազանցապես անցյալ ժամանակաձևի կիրառության վերաբերյալ:

2. Երրորդ գլխի երրորդ ենթագլխում ուսումնասիրվել է սուբյեկտային ժամանակը: Ցանկալի կլիներ այս դիտանկյունից ուսումնասիրել նաև հեքիաթներում սեռերով պայմանավորված ժամանակային ընկալումը:
3. Ատենախոսությունն ավելի կշահեր, եթե ատենախոսն աշխատության մեջ նաև անդրադարձ կատարեր հորիզոնական և ուղղահայաց ժամանակի վերլուծությանը:
4. Քաղաքական խոսույթում առկա է մեր-ի և ձեր-ի հակադրությունը: Արդյոք հեքիաթի տեքստում կա՞ նման հակադրություն՝ խարսխված տարածության և ժամանակի փոխներգործության վրա:

Նշված հարցադրումները հայեցակարգային չեն և ամենին չեն ստվերում աշխատանքի գիտական որակն ու կարևորությունը: Լուսինե Մադաթյանի ատենախոսությունը բովանդակալից և կայացած աշխատանք է, աչքի է ընկնում յուրատիպ հարցադրումներով, տեսական եզրահանգումների հազեցվածությամբ և գրագիտությամբ: Ատենախոսը քաջատեղյակ է ուսումնասիրվող նյութին: Նրան հաջողվել է իրականացնել ամփոփ հետազոտություն, որի արդիականությունը, նորույթը, գիտական արժեքը, ինչպես նաև շարունակելության ներուժը կասկած չեն հարուցում: Նյութի ծավալով, աշխատանքի տեսական, վերլուծական ու մեկնողական մասերի հազեցվածությամբ Լուսինե Մադաթյանի ատենախոսությունը լիովին բավարարում է թեկնածուական աշխատանքին ներկայացվող պահանջները և հեղինակն արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին: Մեղմագիրն իր կառուցվածքով և բովանդակությամբ համապատասխանում է ատենախոսությանը: Հեղինակի տպագիր հոդվածները արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Այս ամենը թույլ է տալիս եզրակացնել, որ Լուսինե Գեղամի Մադաթյանն արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանին և միջնորդել Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար Լեզուներ» մասնագիտական խորհրդին՝

նրան շնորհելու բանասիրական գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանը Ժ.02.07
«Ռումանագերմանական լեզուներ» մասնագիտության գծով:

Գրախոս՝ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի
լեզվի տեսության և միջմշակութային
հաղորդակցության ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ. պրոֆեսոր



Ա.Ա. Սիմոնյան

Հաստատում եմ Բ.Գ.Պ., պրոֆեսորի Ա.Ա. Սիմոնյանի ստորագրությունը:

Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի
գիտքարտուղար՝

Ռ.Ս. Կասաբարովա